տութեամբ այնոցիկ տումարաց՝ այլ և արմատոց ընկալագրոցն և որ առաւել կարևորն է՝ իսկական թղթոց՝ որովք առաքեալ են գրամք՝ և զայնս կարգաւ դասաւորեալ ի մի ունել ի պատրաստի։ Իսկ զյօդուածս ծախուց ստուգել գրութեամբք՝ որովք ըստ նախահաշուոյն պահանջեալ են ի Գանձարանէ գրամք՝ և ստորագրութեամբք ընդունողաց այնոցիկ։ Վեցերորդ՝ հարկ ի վերայ կայ Մինոդիդ նախահոգ լինել՝ զի բաց ի սովորական ստուգութենէ Գանձարանի՝ այլ և ի ձեռն երկուց կամ երից անդամոց Դորին յամոյ ամիս անխափան զննեսցին տումարք ծախուց Վանական Կառավարութեան՝ ճեմարանի և Ցգարանի՝ պահանջելով միշտ զդրաւոր ապացոյցս ծախուց և զդիտողութիւնս իւրեանց գրելով ի նոյն իսկ տումարս՝ զարդեանցն յայտնել Մեզ։ Իսկ զծախս Վեհարանի Տրնտեան նորին առնելոց է ըստ Մերոյ յանձնարարութեան և դիտութեան։ Եօթներորդ՝ զնեիչք տումարաց ունելով առաջի աչաց զօրուան Պայր Ամոսոյ՝ խորհեսցին ընդ տընտեսական վարչութիւնս առ ի դասել զհնարքս հեպզհետ յապաւելոյ զաւելորդս ծախուց որոշելոց ի նախահաշուի՝ իսկ Մինոդդ պահանջելով ի ժամանակին զհասոյթս գիւղօրէից և կալուածոց՝ զապառիկս գնոց վաճառելի գրոց՝ «Արարատ» ամսագրոյ և զայլս ամենայն՝ փոյթ կայցի արդիւնաւորել զեկամուտսն առհասարակ և զծախսն առնել գէթ ըստ նախահաշուոյն և ոչ բնաւ աւելի։ Իսկ յորժամ՝ անակնկալ ինչ դէպք սաստիկսցեն առնել զծախս արտաքոյ սահմանեալ նախահաշուոյն՝ յայնժամ իւրաքանչիւր Տեսչութիւն պարտի դիմել առ Մեզ և խնդրել զանօրէնութիւն։ Եւ ութներորդ՝ Մինոդդ այժմէն իսկ հարկ ի վերայ դիցէ վերոյիշեալ տընտեսական վարչութեանց՝ զի յայսմհետէ ուշ դիցեն ի վերջին ամիս իւրաքանչիւր ամի զզուշաւոր նախահոգութեամբ և ճշդութեամբ կազմել զնախահաշիւ մաց և ելից իւրեանց հանդերձ մանրամասն ցուցակաւ և մատուցեն Մեզ վասն կազմելոյ միարան խորհրդովք նոցին զընդհանուր նախահաշիւ և ապագայ յետ հաստատութեան Մերոյ՝ ի գործադրութիւն ի ձեռն Մինոդիդ։ Եւ քանզի առ չնչելոյ այլ և այլ հանգամանաց և սղութեան ժամանակի՝ կազմութիւն նախահաշուոյս թերևս չլիցի զերծ ի թերութեանց՝ սակայն սիրեմք յուսալ՝ զի յայսմհետէ փորձն օրըստօրէական ուսուցցէ Մեզ լնուլ զթերին յապագային։

Ցամի Փրկչին 1894՝
28 յունուարի և ըստ
Տումարի ՌՃԽԳ.

Ի Բարարատեան Մայր
Աթոռս, ի Ս Էջմիածին
Ի Վաղարշապատ։

Թ. 111.

Իսկականի վրայ
ստորագրած է՝
ՄԿՐՏԻՉ ԿԻԼԻՊԻԿՈՎ
Ամենայն Հայոց։

Ս. Մինոդն ի 4 Փետրուարի և ի 4 Մարտի կազմած օրադրութեամբք որոշեց կատարել Նորին Օծութեան ս. Կոնդակն ըստ ամենայնի։

ԻՄԱՍՏԱԼԻՑ ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ.

— Ձայները չպէտք է համրուին՝ այլ կշռուին։

— Աղատութեան ոգին՝ օրէնքները սիրելն է։

— Շահասիրութիւնը ամէն լեզուն ալ կը խօսէ և ամէն դերն ալ կը խաղայ՝ մինչև իսկ անշահասիրութեան լեզուն ու դերն։

— Յիմարը կը պաշտպանէ մոլորութիւն մը՝ մէկ այնպիսի մարդու յանդուգն անձնապաստանութիւնով՝ որը որ երբէք չսխալուիր։ Իսկ իմաստունը ընդհակառակն կը հաստատէ ճշմարտութիւն մը՝ մէկ այնպիսի մարդու զգուշութիւնով՝ որը որ կրնայ սխալուիլ։

— Թանկագին է մեզ բարեկամը՝ սակայն թշնամին էլ մեզ կօգնէ. բարեկամը ցոյց կուայ մեզ թէ՝ ի՞նչ կրնամք ընել. իսկ թշնամին կը սորվեցնէ մեզ թէ՝ ի՞նչ պէտք է ընենք։